ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը եւ Բելառուսի Հանրապետության առողջապահության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով փոխշահավետության եւ փոխօգնության սկզբունքներից, ցանկանալով աջակցել առողջապահության եւ բժշկագիտության բնագավառում երկկողմ հարաբերություններին,

համոզված լինելով, որ այդ համագործակցությունը կնպաստի բնակչության առողջության բարելավմանը,

պայմանավորվեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Պայմանավորվող կողմերը բժշկագիտության եւ առողջապահության բնագավառում կզարգացնեն եւ կիրականացնեն համագործակցությունը Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը մտադրված են զարգացնել փոխշահավետ համագործակցությունը հետեւյալ ուղղություններով.

բնակչության համար բժշկական օգնության կազմակերպում (բժշկական ծառայությունների շուկայի ստեղծում, առաջնային բժշկասանիտարական եւ մասնագիտացված օգնության զարգացում, նոր բժշկական տեխնոլոգիաների ներդրում),

առողջապահության ու բժշկագիտության առաջնային եւ հրատապ խնդիրներին վերաբերող համատեղ ծրագրերի մշակում եւ իրականացում,

շրջանավարտի, մասնագետի նկատմամբ որակավորման համաձայնեցված պահանջների հիման վրա բժշկական, գիտական, գիտամանկավարժական կադրերի պատրաստում ու որակավորման բարձրացում,

բժշկական նշանակության ապրանքների եւ բժշկական տեխնիկայի պետական գրանցում եւ սերտիֆիկացում,

դեղամիջոցների որակի ստուգում եւ պետական գրանցում,

սննդամթերքի պետական հիգիենիկ կարգավորում եւ գրանցում,

քաղաքացիների առողջության պահպանման պահանջներին համապատասխան՝ փորձարարական, կլինիկական եւ կանխարգելիչ բժշկության բնագավառում հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների զարգացում,

առողջապահության եւ բժշկագիտության էկոնոմիկա,

առողջապահության մեջ ավտոմատացված կառավարման համակարգեր, հաշվողական տեխնիկա եւ համակարգչայնացում,

բնակչության հիգիենիկ-համաճարակային բարօրության ապահովման բնագավառում համակարգում, այդ թվում՝

ա) 1982 թ. հոկտեմբերի 21-ի՝ "Սահմաններում բեռների հսկողության անցկացման պայմանների համաձայնեցման մասին" միջազգային կոնվենցիայի համաձայն՝ տարածքների սանիտարական պաշտպանություն,

բ) պետական սանիտարահամաճարակային նորմավորում,
գ) իմունականխարգելիչ աշխատանքներ, վարակիչ հիվանդությունների լաբորատոր ախտորոշում,
դ) սոցիալական-հիգիենիկ մոնիտորինգ:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերի պետությունների քաղաքացիներին բժշկական օգնություն են ցուցաբերվում 1997 թվականի մարտի 27-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիներին բժշկական օգնություն ցուցաբերելու մասին Համաձայնագրով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը նպաստում են բժշկական գիտական կազմակերպությունների եւ առողջապահական կազմակերպությունների միջեւ (այսուհետ՝ Համագործակցող կազմակերպություններ) անմիջական կապերի զարգացմանը:
Համագործակցող կազմակերպությունների միջեւ կապերն իրականացվում են պայմանագրերի հիման վրա, որոնք պետք է համապատասխանեն երկու Կողմերի պետությունների օրենսդրություններին:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը սույն Համաձայնագրի 2-րդ կետն իրականացնում են փոխադարձ խորհրդատվությունների, մասնագետների եւ բժշկատեխնիկական տեղեկատվության փոխանակման, սիմպոզիումների ու կոնֆերանսների կազմակերպման, մենագրությունների եւ հոդվածների տպագրման միջոցով, ինչպես նաեւ այլ ձեւերի համագործակցության իրականացմամբ, որոնց վերաբերյալ ձեռք է բերվել պայմանավորվածություն:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը միմյանց կտեղեկացնեն համագումարների, կոնֆերանսների, ցուցահանդեսների եւ նման այլ միջոցառումների անցկացման պլանների մասին եւ կաջակցեն գործուղող Կողմի հաշվին այդ միջոցառումներին մասնակցող մասնագետների ընդունելությանը:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը համատեղ աշխատանք կտանեն բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնական պլանների ու ծրագրերի բարելավման ուղղությամբ եւ այդ հաստատությունների միջեւ կհաստատեն ուղղակի ստեղծագործական կապեր, ինչպես նաեւ կիրականացնեն մասնագետների, ուսանողների եւ սովորողների փոխանակումներ:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերը համատեղ աշխատանք կտանեն բժշկական, կրթական ու գիտական ոլորտի աշխատողների որակավորման բարձրացման պայմաններ ստեղծելու ուղղությամբ, ինչպես նաեւ աշխատանքային տեղերում ստաժավորման հնարավորություն՝ պայմանագրային

հիմունքով:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել
փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող արձանագրություններով:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին Կողմերի կողմից դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր ծանուցելու օրվանից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է 2 տարի ժամկետով: Սույն Համաձայնագրի գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա երկամյա ժամանակաշրջաններով,
մինչեւ Կողմերից մեկը ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Մինսկ քաղաքում 2005 թվականի մայիսի 3-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն եւ ռուսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն ունեն միանման ուժ:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թվականի հունիսի 23-ից: